ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/89

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 հոկտեմբերի 2023 թ. N 89

ԳՅՈՒՄՐԻԻ «ՊՐՈԳՐԵՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **Գյումրիի «Պրոգրես համալսարան» ԱԿ**
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1 և Խրիմյան Հայրիկի 40ա

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ. հոկտեմբերի 16-ին քննարկեց Գյումրիի «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի միջին մասնագիտական կրթական աստիճանի /բժշկական քոլեջի/ (այսուհետ՝ հաստատություն, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	19 մայիսի 2022 թ.
Վերանայված ինքնավերլուծության ներկայացում	21 նոյեմբերի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	20-23 փետրվարի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	23 մայիսի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	26 հունիսի 2023թ.

Հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»**, գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Հաստատության կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՄՈՒՀ-ում կրթությունն իրականացվում է պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ)-ների հիման վրա, 2022թ. -ին անցում է կատարվել մոդուլային ծրագրերի:

Քոլեջում առկա են որոշակի խնդիրներ վերնջնարդյունքահեն կրթական ծրագրերի զարգացման, ներդրման, մշտադիտարկման և որակի ապահովման առումով: Գրեթե բացակայում են վերոհիշյալ գործընթացների կանոնակարգումն ապահովող փաստաթղթերը և գործընթացների իրականացման հիմքերը: Դեռևս սաղմնային փուլում է վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի զարգացման փորձը: Գործատուները ՄԿԾ-ների կազմման և վերանայման գործընթացներին անմիջական մասնակցություն չունեն: Առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն:

Դասախոսների որակավորումները համապատասխանում են դասավանդվող դասընթացներին: Դասախոսական կազմը հիմնականում կայուն է: Դասավանդման գործընթացում ներգրավված են պրակտիկ ոլորտից մասնագետներ և գործատուներ: Ներդրված են դասախոսական կազմի երիտասարդացման մեխանիզմներ և վերջին տարիներին նկատվում է երիտասարդ դասախոսների թվի աճ: Սկսնակ դասախոսներին տրամադրվում է օժանդակություն, առկա են մասնագիտական առաջընթացի դեպքեր: ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներն ապահովված են բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմով:

ՄՈՒՀ-ում ընդհանուր առմամբ ուսումնական միջավայրի ապահովման համար առկա են նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Վերջին տարում ֆինանսական ռեսուրսների զգալի աճ է ապահովվել, նախանշված է այդ ռեսուրսների ծախսման ուղղությունը: Քոլեջին տրամադրված տարածքները, լսարանները, լաբորատորիաներն ու կաբինետները ապահովում են տեսական ուսուցման իրականացումը, իսկ ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան գործնական հմտությունների ձեռքբերման համար համատեղ օգտագործվում են գործատուների ռեսուրսները՝ բժշկական կենտրոնում, դեղատներում և ատամնատեխնիկական լաբորատորիայում:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը հանդիսանում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում: Որպես առանձին միավոր քոլեջը կայացման խնդիր ունի. այն սերտաճած է համալսարանի հետ: Քոլեջի և համալսարանի առաքելությունը մեկտեղված են, քոլեջի նպատակները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները հստակեցված չեն: Քոլեջի առաքելությունը համարվում է համալսարանի առաքելության մի մասը, սահմանված առաքելությունը շատ ընդհանրական է, արտահայտված չէ միջին մասնագիտական կրթության շրջանակը:

ՄՈՒՀ-ը ղեկավարում է համալսարանի ռեկտորը: Քոլեջ դեռևս չունի կազմակերպական կառուցվածք, գործառույթները բաշխված չեն և լիովին մեկտեղված են համալսարանի ընթացիկ գործունեության հետ: Քոլեջի գործունեությունը կարգավորող փաստաթղթային հենքը համալսարանի կանոնակարգերն են, որտեղ առանձնացված չեն քոլեջի գործունեության առանձնահատկությունները: Սակայն հաստատության կողմից իրականացվող կրթական գործընթացներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին:

ՄՈՒՀ-ը, ապահովելով միջազգային շուկայում այս պահին պահանջարկ ունեցող մասնագիտություններով կրթություն, կարողացել է ներգրավել միջազգային ուսանողներ, սակայն որակի կայունության և ապահովման առումով առկա են խնդիրներ:

Չնայած 2012թ.-ից փորձեր են իրկանացվել ներդնելու որակի ապահովման գործընթացներ, սակայն առկա չեն պլանավորումներ, հստակեցված չեն որակի ապահովման վարչության պետի գործառույթները, բացակայում է համապատասխան գործիքակազմը: Չնայած քոլեջի ներքին և արատաքին շահակիցները մասնակցում են կրթական գործընթացներին, սակայն ՈԱ գործընթացներում ներգրավված չեն: Քոլեջը կարիք ունի մշակելու և ներդնելու տվյալների հավաքագրման մեխանիզմներ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջում առկա են ուսանողների ներգրավման մեխանիզմներ, վերջին տարում ընդգրկվել են օտարերկրյա ուսանողներ:

Ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին: Մեծ է կուրսղեկների դերը ուսանողների կրթական կարիքների բացահայտման գործում:

Ուսանողներին տրամադրվում են որոշ խորհրդատվություններ, առկա է ուսանողների գործնական հմտություններն ամրապնդող հնարավորություն՝ ուսանողները հնարավորություն ունեն հավելյալ ժամանակ անցկացնել ուսումնական բազաներում:

Առկա է ուսանողների շահերի ու իրավունքների պաշտպան մարմին՝ Ուսանողական խորհրդ, վերջին տարում ընդգրկվել են նաև օտարերկրյա ուսանողներ: Գործում են ուսանողական զեղչեր:

Քոլեջը հետազոտության ոլորտում չի սահմանել իր նպատակադրումներն ու խնդիրները, կարճաժամկետ ու երկարաժամկետ պլանավորումներ առկա չեն: Աշխատանքային ծրագրերը չեն ներառում հետազոտական բաղադրիչ պարունակող արաջադրանքներ, մշակված չեն դրանց իրականացման պահանջներն ու գնահատման չափանիշները: Փոխկապակցված չեն ուսումնական և հետազոտական գործընթացները:

Քոլեջը որոշակի գործընթացներ է իրականացնում արտաքին հաշվետվողականությունն ապահովելու համար, ներդրված են արտաքին և ներքին հաշվետվողականության ապահովման որոշ մեխանիզմներ: Առկա է պաշտոնական կայքէջ և ֆեյսբուքյան էջ, կան հետադարձ կապի ապահովման հնարավորություններ:

Քոլեջը հիմնականում ապահովում է տարածաշրջանի գործատուների հետ կապեր՝ միտված ուսուցման որակի ապահովմանը և ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը: Քոլեջը պրակտիկաների և գործնական պարապմունքների իրականացման համար համագործակցում է տարածաշրջանում ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ:

Օտարերկրյա ուսանողների ներգրավումը միտված է մասնագիտությունների միջազգայնացմանը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **Գյումրիի «Պրոգրես համալսարան» արտադրական կոոպերատիվին (միջին մասնագիտական կրթական աստիճան) շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով «**Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - նոր ՌԾ մշակելու անհրաժեշտությանը, հստակ սահմանելով քոլեջի առաքելությունը, նպատակադրումները, տեսլականը,
   - նոր ՌԾ-ի իրականացման ռիսկերի գնահատման մեխնիզմների մշակմանն ու կիրառմանը,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով գործուն մեխանիզմների ներդնմանը,
   - ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավմանը՝ ուսանողներին ուղղորդելով աշխատաշուկա,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - անգլերեն լեզվով դասավանդողների ներգրավմանը՝ կիրառելով դասախոսի ընտրության մրցութային կարգը,

- դասախոսների մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումների իրականացմանը,
- դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների կիրառմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորրմանը,
- որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Գյումրիի «Պրոգրես համալսարան» ԱԿ-ի միջին մասնագիտական կրթական աստիճանի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ
2023 թ. հոկտեմբերի 25
ք.Երևան

Ա. Սաղյան